բութիւնը վճռական կերպով բողոքում է վրաց զօրքերի սանձարձակութիւն-ների դէմ մի շրջանում, որը կազմում է Հայաստանի հողամասը և բռնութեամբ գրաւած է վրաց զօրքերով: Եթէ անմիջապէս միջոցներ ձեռք չառնէք վերջ տալու, հետևանքների պատասխանատուութիւնը կառավարու-թիւնս վերցնում է իր վրայից»:

Շուտով յայտնի դարձաւ, նոյնպէս, որ միայն Ուգունլարը չէր վրաց զօրքերի սխրագործութեանց զոհը. Աղրի, Ամուշ, Ակորի և մի շարք ուրիշ գիւղեր էլ ենթարկւել էին հարստահարութիւնների, կողոպուտի ու բռնու-թեանց: Եւ նման երևոյթները ընդհանուր էին Լոռիի բոլոր վայրերում, ուր կանգնած էին վրաց զօրամասերը:

Մինչ հայ-վրացական սահմանի վրա տեղի էին ունենում այս դէպքերը, Երևանում կատարւում էին դիւանագիտական բանակցութիւններ Հայաս-տանի և Վրաստանի միջև: Նոյեմբերի սկզբներին Երևան էր եկել Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին՝ հայ-վրացական սահմանային վէճը լուծելու նպատակով: Նոյ. 29-ին նա գրաւոր կերպով հաղորդեց Հայաստանի արտա-քին գործոց նախարարութեան, որ ինքը «լիազօրւած է վերջնականապէս լուծելու սահմանային հարցը և կայացնելիք վճիռը ներկայացնելու Վրաս-տանի կառավարութեան ի վաւերացումն»: Եւ նոյն գրութեան մէջ որոշում էր վրացիների սահմանային պահանջները. «վրաց հանրապետութեան կա-ռավարութեան պահանջով սահմանագիծը Հայաստանի և Վրաստանի հան-րապետութիւնների միջև պէտք է անցնի Թիֆլիսի նահանգի հին սահմանով, այսինքն՝ այն գծով, որը այժմ բաժանում է Ախալքալաքի ու Բորչալուի գաւառները նախկին Երևանի նահանգի նախկին Ալեքսանդրապոլ գաւառից՝ հարաւում, իսկ արևելքից՝ այն գծով, որը բաժանում է Բորչալուի գաւառը նախկին Գանձակի նահանգի նախկին Ղազախի գաւառից»:

Ի պատասխան այս գրութեան, Ս. Տիգրանեանը հաղորդեց, նոյնպէս գրաւոր, որ սահմանը Հայաստանի և Վրաստանի միջև որոշւած և հայ ու վրաց ներկայացուցիչների միջև մէկից աւելի անդամներ հաստատւած է 1917 թւի ընթացքին: Այդ սահմանը, որ հիմնւած է ազգագրական սկզբունքի վրա, Հայաստանի կառավարութեան համար ի գօրու է և այժմ: Ըստ 1917թ. հայ-վրացական համաձայնութեան «Ախալքալաքի գաւառը ամբողջովին և Բորչալուի գաւառի մեծ մասը, ուր հայ ազգաբնակութիւնը կազմում է բացարձակ մեծամասնութիւն, անկապտելի կտորն են Հայաստանի: Միաժա-մանակ Բորչալուի գաւառի հիւսիսային մասը և Թիֆլիսի գաւառի հիւսիսա-յին մասը մինչև Թիֆլիս քաղաքը, չնայած որ այս մասում հայ բնակչու-թիւնը աւելի է վրացականից, մոցւած են Վրաստանի կազմի մէջ՝ այն հաշւով, որ Վրաստանի հայերը կունենան ազգային-մշակութային ինքնո-րոշման երաշխիքներ»: Եթէ, սակայն, վրաց կառավարութիւնը պնդում է նոր սահմանագծի վրա, այն ժամանակ սահմանային խնդիրը պէտք է քննւի բովանդակ ծաւալով՝ ոչ միայն Ախալքալաքի և Լոռիի, այլ և «այն շրջան-ների (Բորչալուի ու Թիֆլիսի գաւառների) վերաբերմամբ, որոնք կարող են առանց վէճի միացւել Վրաստանին միայն այն դէպքում, երբ Վրաստանի և Հայաստանի հողային բաժանման ամբողջ նախկին ծրագիրը պահպանւի»: